

առեւտուրի մէջ շատ ճարպիկ են . երկրին մեծագոյն արտադրութիւնը մնտաքս է . եւ զանազան պտուղներ . ծորենը կիլիկիայէն կրտասանն, շատ առաջատանաւեր ունին, եւ հրմուտ են նաւարկութեան . կիլիկիոյ նաւահանգիստները կ'երթան , Սուէսեայ , Իսթէնտէրուէն , Մէրսին . զանազան ապրանքներու վաճառականութիւն կ'ընեն , մասնաւորապէս ցորեն կը գնեն այդ տեղերէն :

Հայկական փոքր գաղթականութիւն մըն ալ ունեցանք հոն . 95ի կոտորածներու միջոցին կիլիկիայէն քանի մը հայ ընտանիքներ հոն գաղթեցին եւ երկիրը հանգիստ ու ապահով գտնելով հոն հաստատուեցան . նշանաւոր վանք մը ունինք հոն . «Ս . Անտոն» անունով . որ Զմմարայ ըսուած լեռան վրայ , Պէյրութէն

16 քիլոմէթր դէպ ի հիւսիս, ծովէն 1500 ոտք բարձրութեան վրայ հիմնուած է . չէնքը՝ հրակայութեան եւ զեղեցկութեան տեսակէտով առաջիննէն է . շատ ազարակներ եւ անտառներ ունի :

«Ս . Անտոն»ը Պապական Հայոց կը պատկանի . չեմ գիտեր ո՞ր թուականին եւ ի՞նչպէ՞տ հիմնուած է . բայց Հասունեաններու վէճին առթիւ գոցուեցաւ ու միաբանները վնասուեցան, եւ երկար ատեն զոց մնաց . 95ի դէպքէն յետոյ որքանոց մը բացուեցաւ անոր մէջը, եւ այսօր քանի մը տասնեակ հայ որբեր հոն կրթութիւն կ'առնեն :

ՊԱՀԱԻ

ԷՕՄԷՐ ԽԱՅԵԱՄԻ ՔԱՌԵԱԿՆԵՐԸ

ԿԱ

Աղեւորած գլխովս՝ քու սէրդ զիս վարմը ձգեց ,
Եթէ ոչ՝ ուրկի՞ց իրար հանդիպեցան իմ ձեռքս եւ այս բաժակը գինիի .
Սրբական խորտակեց այն զղջումը զոր խելքս ներշնչեց ,
Ու եղանակը պատռեց այն հանդերձը զոր համբերութիւնը կարեց :

ԿՐ

Թշուէտ գինին (մեր երեսին) քողը պատռեց,
Ծորչափ հողի կրեմ՝ չպիտի զատուիմ գինիէ .
Ես զարմանքի մէջ եմ մնացած գինի ծախողներուն վրայ
Թէ իրենց ծախածէն լաւագոյն ի՞նչ պիտի գնեն :

ԿԳ

Այդքան շնորհք ու բարութիւն ի սկզբան ինչո՞ւ եղաւ .
Ու բերկրանքի ու նազանքի մէջ իմ պահուիլս ի՞նչու եղաւ
Հիմա համակ սիրտս ճմլիկ կը ճգնիս ,
Բայց ես ի՞նչ մեղք զործած եմ, նորէն կ'ըսեմ՝ ի՞նչ եղաւ :

ԿԴ

Մտքիս մէջ հուրիակեալ կռուքերու ըզձանքը թող բլլայ :
 Զեռքիս մէջ ամբողջ տարին խաղողի ջուրը թող բլլայ :
 Ինծի կ'ըսեն՝ «Աստուած քեզի զղջում տայ»,
 Ան չի տար ինքնին, ես չեմ ընեմ, հեռու բլլայ :

ԿԵ

Դինեաւանը մէջ լուացում չէ կարելի բայց մեայն գինիով :
 Եւ այն անուշը որ արատուած է՝ չի մաքրուիր,
 Ուրա՛խ եղիւր, զի մեր ժուժկալուծեան քողը
 Այնպէս պատուած է որ ա՛յ չի կարկտուիր :

ԿԶ

Տան մը երգիքին վրայ տեսայ մարդ մը առանձին
 Որ կաւը կը կոխկրտէր ու դայն կ'արեւմարէր
 Այն կաւը խորհրդաւոր լեզուով անոր ըսաւ
 Դիտցի՛ր որ դուն ալ ինծի պէս բաւական պիտի կոխկրտուիս :

ԿԷ

Անուշ օր ժըն է եւ օգը ոչ ջերմ է ոչ ցուրտ,
 Անձրեւը վարդենիին երեսէն փոշին համակ լուացած է,
 Պլպուլը պահլաւիկ լեզուով գեղնած վարդին
 Շարունակ աղերս կը թափէ թէ գինի պէտք է խմէ :

ԿԸ

Դիխուգ փորձանք դալէն առաջ,
 Հրաման տուր որ վարդադոյն գինի բերեն :
 Դուն ոսկի չես, ո՛վ անգէտ պակասամիտ, որ քեզ
 Հողին տակ գնեն ու վերստին լոյս հանեն :

ԿԹ

Հոգ տարէ՛ք՝ գինիի բաժակով ինձ ուժ տալ
 Եւ սաթանման գեղնած գէմըս յակինթի պէս ընել :
 Երբ մեռնիմ եթե՛մ, գինիի մէջ լուացէ՛ք զիս,
 Եւ որթի փայտէն դագաղիս տախտակ ըրէ՛ք :

Հ

Ո՛վ Շահ, ճակատագիրդ ինձ հաճախ
 Եւ քեզի համար թողաւ որպէս ձին զարդարեց,
 Երբ ոսկեամբակ երկվարդ շարժիլ սկսաւ,
 Ոտք զնեղով հողին վրայ, հողը ոսկեղջող եղաւ:

ՀԱ

Այն սէրը որ բարեխառն է՝ փայլ չունի,
 Կիսամեռ կրակի նման՝ տապ չունի:
 Սիրահար այն է որ ամ ու ամիս ցայգ ու ցերեկ՝
 Դիւր ու դադար, կեր ու զուր չունի:

ՀԲ

Ճակատագրին գաղտնիքներու կնճիռները ոչ մէկը չլուծեց,
 Պարունակին ծիրէն դուրս ոչ մէկը մէկ քայլ ոտք չդրաւ:
 Վանդի, կը տեսնեմ, սկսնակէն ու փորձառուէն,
 Անկար անձեռնհաս է ով որ մօրմէ ծնած է:

ՀԳ

Երկինք ամպերէն նարկիզներ կը թափէ,
 Կարծես մարգերուն վրայ ծաղիկ կը թափէ:
 Շուշան բաժակէն վարդ գինի թափեմ,
 Մինչ մանուշակ ամպերը յասմիկ կը թափեն:

ՀԴ

Սակաւապէտ եղի՛ր աշխարհէն եւ գո՛հ ապրէ՛,
 Եւ ժամանակին բարեքէն ու շարիքէն անկախ եղիլ:
 Ձեռքիդ մէջ բռնէ բաժակն ու գեղունիին խոպոպները, զի շուտ
 Ամէն բան կ'անցնի ու սա մէկ քանի օրս մեզի չի մնար:

Թարգմ. պարս. .

ԷՕՄԷՐ ԽԱՅԵԱՄ

Գ. ՓԱՌՆԱԿ

